նել, որովհետեւ «հարկ լուծանէ զօրէնս»· իսկ պատերազմը, ինչպէս յայտնի է, կարող է արդարացնել ամէն տեսակի «հարկադրանքներ»:

Վերջապէս, կար մի երրորդ պատճառ էլ մասնաւորապէս Թիֆլիսի հայութիւնը հալածանքների ենթարկելու համար: Շուտով պիտի կատարուէին Թիֆլիսի քաղաքային Խորհրդարանի (Դումա) ընտրութիւնները: Եթէ իրերն իրենց բնական ընթացքին մնային՝ վրացիք ոչ միայն չպիտի կարողանային մեծամասնութիւն կազմել այդ Խորհրդարանում, այլ եւ պիտի կորցնէին այն աթոռներից շատերը, որ նրանք դրաւել էին 1917-ի գարնան ընտրութիւններին: Այն ժամանակ Թիֆլիսում հարիւր հազարից աւելի ռուս զինուորներ եւ քաղաքացիներ կային, որոնք գերադասօրէն ձայն տուին վրաց Սոցիալ Դեմոկրատիային՝ համարելով նրան համառուսաստանեան կուսակցութիւն: Նոյն նկատումներով, Թիֆլիսում ապրող այլ օտարազգիներից շատերն էլ 1917-ի ընտրութիւններին նեցուկ հանդիսացան վրաց սոցիալ դեմոկրատիային: Այժմ այս օտարազգիների մեծ մասը հեռացել էր Վրաստանից, իսկ մընացածները բացայայտ անբարեացակամութեամբ էին վերաբերւում դէպի ամէն գոյնի վրացիները՝ համարելով նրանց բոլորին էլ շովինիստ եւ օտարատեաց: Զրկուելով այս ձայներից՝ վրացիք, որ, ինչպէս գիտենք, Թիֆլիսի ընդհանուր ազգաբնակութեան մի քառորդ մասն էլ չէին կազմում, պիտի չունենային փոքրամասնութիւն ունենային քաղաքային Խորհրդարանում, որ ասել է, թէ վերջինս նորից հայերի ձեռքն էր անցնելու, քանի որ նրանք ազգաբնակութեան ամենամեծ հատուածն էին ներկայացնում:

Այս «անպատեհութեան» դէմ Վրաստանի հպատակութեան օրէնքը թոյլ զէնք էր· որովհետեւ այդ օրէնքի սահմանում էլ հայերը թըւով գերակշռում էին վրացիներին: Միակ ելքն էր՝ հայերին արհեստականօրէն հեռու պահել ընտրական տուփերից, որ կարող էր տեղի ունենայ նրանց ահաբեկելու ճանապարհով: Եւ որովհետեւ պատերազմը այսօրինակ ահաբեկման համար շատ «պատեհ» առիթ էր հանդիսանում՝ վրաց կառավարութիւնը չուզեց փախցնել այդ առիթը իր ձեռքից: Գլխաւորապէս սրանով պէտք է բացատրել, այն զանգուածային հալածանքները, որոնք առանձին խստութեամբ տեղի ունեցան Թիֆլիսում, զինադադարի կնքումից յետոյ:

Վրաց կառավարութիւնը չսխալուեց իր հաշիւների մէջ: 1919-ի ընտրութիւններին Թիֆլիսցի հայերը, ահաբեկուած կառավարական հալածանքներից, բնաւ չմօտեցան քուէատուփերին: Թիֆլիսաբնակ ռուսներն ու միւս օտարազգիներն էլ, զզուած օրուայ իշխանութեան ազգայնական քաղաքականութիւնից, լռելեայն բոյկոտի ենթարկեցին ընտրութիւնները: Ասպարէզը մնաց վրացիներին, որոնք «յաղթականօրէն» ներս խուժեցին քաղաքային Խորհրդարանը եւ ամբողջովին իրենց ձեռքն առան համայնական բոլոր գործերը: Այսպիսով, բոլշեւիկեան ընտրական մեքենայութիւններն այպանող վրաց ղեկավարները, իսկական բոլշեւիկեան մեթոդներով վրացական ազգային մենատիրութիւն հաստատեցին մի քաղաքում, ուր վրացիք քանակով երրորդ տեղն էին բռնում, իսկ տնտեսական արժէքով եւ գործունակութեամբ երրորդական դերն իսկ արդարացնել չէին կարող...

Սրանք են ահա, հայ-վրացական պատերազմի առթիւ Վրաստանում տեղի ունեցած հակահայկական հալածանքների էական պատճառները:

Ասում ենք էական, որովհետեւ կան եւ երկրորդական, իշխանութեան քաղաքական նկատումների հետ կապ չունեցող պատճառներ, որոնց վրայ աւելորդ ենք համարում կանգ առնել· որովհետեւ նրանք պայմանաւորում են երեւոյթների արտաքին ձեւը, բայց ոչ թէ էութիւնը:

Այսպէս օրինակ, երբ մենք մեղադրում ենք Ժորդանիայի կառավարութիւնը հակահայկական հալածանքների մէջ՝ բնաւ չենք ուզում ասել, թէ այդ հալածանքների այս կամ այն արտայայտութիւնը անպատճառ համապատասխանում էր նրա մտադրութիւններին կամ նկատումներին: Որքան էլ մենք բացասական կարծիք ունենանք Ժորդանիայի կառավարութեան որոշ անդամների մասին, այնուամենայնիւ չենք կարող հաւատալ, թէ նա, in corpore հրահանգում կամ քաջալերում էր դրամաշոր-